ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ՝ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ

Մենք՝ համայնքների ղեկավարներս, ստորագրելով այս Դաշնագիրը, կիսում ենք կայուն ապագայի տեսլականը՝ անկախ մեր համայնքների չափից կամ աշխարհագրական դիրքից: Այս ընդհանուր տեսլականը մղում է մեզ գործողությունների՝ լուծելու հետևյալ փոխկապակցված մարտահրավերները. կլիմայի փոփոխության մեղմում, հարմարվողականություն և կայուն էներգիա: Միասին մենք պատրաստ ենք իրականացնել կոնկրետ, երկարաժամկետ միջոցառումներ, որոնք ապահովում են բնապահպանական, սոցիալապես և տնտեսապես կայուն միջավայր ներկա և ապագա սերունդների համար: Մեր հավաքական պարտականությունն է կառուցել ավելի կայուն, գրավիչ, ապրելու համար հարմարավետ, ճկուն և էներգաարդյունավետ տարածքներ:

ՄԵՆՔ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՍ, ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ

Կլիմայի փոփոխությունն արդեն տեղի է ունենում և հանդիսանում է մեր ժամանակի ամենամեծ համամոլորակային մարտահրավերներից մեկը, որը կոչ է անում անհապաղ գործողությունների և համագործակցության տեղական, տարածաշրջանային և ազգային իշխանությունների միջև ամբողջ աշխարհում:

Տեղական իշխանություններն էներգետիկ անցման և կլիմայի փոփոխության դեմ պայքարի հիմնական շարժիչ ուժերն են՝ քաղաքացիներին ամենամոտ կառավարման մակարդակում: Տեղական իշխանությունները կլիմայական գործողությունների պատասխանատվությունը կիսում են տարածաշրջանային և ազգային իշխանությունների հետ և պատրաստ են գործել՝ անկախ այլ կողմերի պարտավորություններից: Տեղական և տարածաշրջանային իշխանությունները բոլոր սոցիալ-տնտեսական իրավիճակներում և աշխարհագրական դիրքերում կանգնած են առաջնագծում՝ նվազեցնելու իրենց տարածքների խոցելիությունը կլիմայի փոփոխության տարբեր ազդեցությունների նկատմամբ: Չնայած արտանետումների նվազեցմանն ուղղված ջանքերն արդեն իսկ իրականացվում են, հարմարվողականությունը մնում է մեղմման անհրաժեշտ և անփոխարինելի լրացում:

Կլիմայի փոփոխության մեղմումը և հարմարվողականությունը կարող են բազմաթիվ օգուտներ բերել շրջակա միջավայրին, հասարակությանը և տնտեսությանը: Համատեղ լուծվելով՝ նրանք նոր հնարավորություններ են բացում կայուն տեղական զարգացումը խթանելու համար: Սա ենթադրում է ներառական, կլիմայի նկատմամբ դիմակայուն, էներգաարդյունավետ համայնքների կառուցում, կյանքի որակի բարձրացում, ներդրումների և նորարարության խթանում, տեղական տնտեսության խթանում և աշխատատեղերի ստեղծում, շահագրգիռ կողմերի ներգրավվածության և համագործակցության ամրապնդում:

Էներգետիկ և կլիմայական մարտահրավերների տեղական լուծումներն օգնում են քաղաքացիների համար ապահովել անվտանգ, կայուն, մրցունակ և մատչելի էներգիա և, հետևաբար, նպաստում են էներգետիկ կախվածության նվազեցմանը և խոցելի սպառողներին պաշտպանելուն:

ՄԵՆՔ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՍ, ՈՒՆԵՆՔ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍԼԱԿԱՆ ՄԻՆՉԵՎ 2050 ԹՎԱԿԱՆԸ.

- Դեկարբոնիզացված տարածքներ՝ այդպիսով նպաստելով միջին գլոբալ տաքացումը նախաարդյունաբերական մակարդակներից 2°C-ից զգալիորեն ցածր պահելուն՝ համահունչ կլիմայի միջազգային համաձայնագրին, որը ձեռք է բերվել 2015 թվականի դեկտեմբերին Փարիզում Կոնվենցիայի կողմերի 21-րդ կոնֆերանսի շրջանակներում,
- Ավելի դիմակայուն տարածքներ՝ այդպիսով պատրաստվելով կլիմայի փոփոխության անխուսափելի բացասական ազդեցությանը,
- Բոլորի համար ապահով, կայուն և մատչելի էներգետիկ ծառայությունների համընդհանուր հասանելիություն՝ այդպիսով բարելավելով կյանքի որակը և ամրապնդելով էներգետիկ անվտանգությունը:

ԱՅՍ ՏԵՍԼԱԿԱՆԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՍ, ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.

- Որպես միջնաժամկետ նպատակ՝ **մինչև 2030 թվականը** մեր համայնքների տարածքներում CO_2-ի (հնարավորության դեպքում նաև այլ ջերմոցային գազերի) արտանետումների կրճատում **առնվազն 30%-ով** կամ **35%-ով**, մասնավորապես՝ էներգաարդյունավետության բարելավման և էներգիայի վերականգնվող աղբյուրների ավելի լայնածավալ օգտագործման միջոցով[1],
- Որպես երկարաժամկետ նպատակ՝ CO_2-ի (հնարավորության դեպքում նաև այլ ջերմոցային գազերի) արտանետումների կրճատում մեր համայնքների տարածքում **առնվազն 60%-ով մինչև 2050թ.**՝ համեմատած **1990թ.-ի** արտանետումների մակարդակների հետ, կամ **առնվազն 40%-ով մինչև 2050թ.**՝ **2005** թվականից հետո ընտրված ելակետային տարվա արտանետումների մակարդակի համեմատ,
- Ջանքերի գործադրում կլիմայական և էներգետիկ մեր քաղաքականության մեջ **ավելի հավակնոտ երկարաժամկետ նպատակների** հասնելու համար՝ համեմատած Ազգային մակարդակով սահմանված գործողություններում ստանձնած հանձնառությունների և Արևելյան գործընկերության տարածաշրջանի վերոհիշյալ նվազագույն թիրախների հետ՝ **մինչև 2050 թվականը կլիմայական չեզոքություն ապահովելու նպատակով**,
- Դիմակայունության ամրապնդում՝ հարմարվելով կլիմայի փոփոխության ազդեցությանը,
- Էներգետիկ աղքատության հաղթահարում. որպես հիմնական գործողություններից մեկը՝ ապահովելու արդար անցումն ու բնակչության հասանելիությունը մատչելի, ապահով և կայուն էներգիայի,
- Մեր տեսլականի, արդյունքների, փորձի և նորարարական մոտեցումների կիսում Արևելյան գործընկերության տարածաշրջանում, ԵՄ-ում և նրա սահմաններից դուրս գտնվող տեղական և տարածաշրջանային իշխանությունների հետ անմիջական համագործակցության և գործընկերների միջև փոխանակման միջոցով, մասնավորապես՝ Քաղաքապետերի գլոբալ դաշնագրի համատեքստում:

[1] Կիրառվում է միայն մինչև 2030 թվականը ջերմոցային գազերի արտանետումները առնվազն 30%-ով կամ 35%-ով կրճատելու հանձնառություններ ստանձնած այն համայնքների համար, որոնք որոշում են կայացրել երկարաձգել իրենց հանձնառությունները Դաշնագրի ներքո մինչև 2050 թվականը:

Մեր հանձնառությունները գործի վերածելու համար մենք պարտավորվում ենք հետևել Քաղաքապետերի դաշնագրի համապատասխան ընթացակարգերին և մեթոդաբանություններին՝ ներառյալ Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագրի մշակումը և ներկայացումը, ինչպես նաև առաջընթացի կանոնավոր մոնիտորինգը:

ՄԵՆՔ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՍ, ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ.

- Ուժեղ քաղաքական առաջնորդություն,
- Քաղաքական մանդատներից դուրս հավակնոտ երկարաժամկետ նպատակների հաստատում,
- Համակարգված փոխգործակցություն մեղմման և հարմարվողականության միջև՝ ներգրավված բոլոր մունիցիպալ ստորաբաժանումների մոբիլիզացման միջոցով,
- Միջոլորտային և ամբողջական տարածքային մոտեցում,
- Համապատասխան մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսների ապահովում,
- Բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը մեր տարածքներում,
- Քաղաքացիների՝ որպես էներգիայի հիմնական սպառողների, «արտադրող-սպառողների» և պահանջարկին արձագանքող էներգետիկ համակարգի մասնակիցների հզորացում,
- Անհապաղ գործողություններ՝ հատկապես «առանց ափսոսանքի», ճկուն միջոցառումների միջոցով,
- Էներգետիկ անցման տեխնիկական և հասարակական մարտահրավերների լուծման համար խելացի մոտեցումների իրականացում.
- Մեր գործողությունների կանոնավոր ճշգրտումներ՝ համաձայն մոնիտորինգի և գնահատման արդյունքների,
- Համակցված հորիզոնական և ուղղահայաց համագործակցություն տեղական իշխանությունների և կառավարման բոլոր այլ մակարդակների միջև:

ՄԵՆՔ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՍ, ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆՔ.

- Եվրոպական հանձնաժողովի նախաձեռնությունը, որը ներառում է մեղմումը և հարմարվողականությունը՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարի երկու հիմնասյուները, այս միասնական նախաձեռնության ներքո և էլ ավելի ամրապնդում սիներգիաները ԵՄ այլ համապատասխան քաղաքականությունների և նախաձեռնությունների հետ,
- Եվրոպական հանձնաժողովի աջակցությունը Քաղաքապետերի դաշնագրի մոդելի ընդլայնմանը աշխարհի այլ մասերում Քաղաքապետերի գլոբալ դաշնագրի միջոցով,
- Տարածաշրջանների կոմիտեի՝ որպես ԵՄ տեղական և տարածաշրջանային իշխանությունների ինստիտուցիոնալ ձայնի աջակցությունը Քաղաքապետերի

դաշնագրի և դրա նպատակների համար,

- Անդամ պետությունների, շրջանների, մարզերի, մենթոր քաղաքների և այլ ինստիտուցիոնալ կառույցների կողմից տեղական իշխանություններին տրամադրվող աջակցությունը՝ Քաղաքապետերի դաշնագրի ներքո կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտում իրենց պարտավորությունները կատարելու համար:

ՄԵՆՔ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՍ, ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ.

- ՏԵՂԱԿԱՆ ԱՅԼ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.
  - Միանալ մեզ «Քաղաքապետերի դաշնագիր» նախաձեռնությունում,
  - Կիսվել գիտելիքներով և ներգրավվել կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներում՝ Քաղաքապետերի դաշնագրի ներքո:
- ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ / ԵՆԹԱԶԳԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.
  - Տրամադրել մեզ ռազմավարական ուղղորդում, քաղաքականություն, տեխնիկական և ֆինանսական աջակցություն մեր գործողությունների ծրագրերի և հարակից միջոցառումների մշակման, իրականացման և մոնիտորինգի համար,
  - Օգնել մեզ խթանել համագործակցությունը և համատեղ մոտեցումներն ավելի արդյունավետ և ինտեգրված գործողությունների համար:
- ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.
  - Պատասխանատվություն ստանձնել կլիմայի փոփոխության դեմ պայքարում և տրամադրել համապատասխան քաղաքականություն, տեխնիկական և ֆինանսական աջակցություն մեղմման և հարմարվողականության՝ մեր տեղական ռազմավարությունների պատրաստման և իրականացման համար,
  - Ներգրավել մեզ մեղմման և հարմարվողականության ազգային ռազմավարությունների նախապատրաստման և իրականացման գործընթացում,
  - Ապահովել համապատասխան հասանելիություն ֆինանսավորման մեխանիզմներին՝ աջակցելու տեղական կլիմայական և էներգետիկ գործողություններին,
  - Ճանաչել մեր տեղական ջանքերի ազդեցությունը, հաշվի առնել մեր կարիքները և արտացոլել մեր տեսակետները ազգային, եվրոպական և միջազգային կլիմայական գործընթացներում:
- ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ.
  - Համախմբել քաղաքականության շրջանակները, որոնք աջակցում են տեղական կլիմայական և էներգետիկ ռազմավարությունների իրականացմանը և համայնքից համայնք կամ քաղաքից քաղաք համագործակցությանը,
  - Տրամադրել մեզ համապատասխան գործառնական, տեխնիկական և առաջխաղացմանն ուղղված աջակցություն,
  - Շարունակել ներառել Քաղաքապետերի դաշնագիրը Եվրոպական Միության համապատասխան քաղաքականությունների, օժանդակող ծրագրերի և գործունեության մեջ՝ միաժամանակ ներգրավելով մեզ դրանց նախապատրաստման և իրականացման փուլերում,

- Շարունակել հասանելի դարձնել ֆինանսավորման հնարավորությունները մեր հանձնառությունների իրականացման համար, ինչպես նաև առաջարկել ծրագրերի մշակման աջակցության հատուկ միջոցներ և գործիքներ, որոնք օգնում են մեզ մշակել, մրցույթ անցկացնել և մեկնարկել ներդրումային ծրագրեր,
- Ընդունել մեր դերն ու ջանքերը կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության գործում և կիսվել մեր ձեռքբերումներով միջազգային հանրության հետ:

- ԱՅԼ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ [2] .
  - Մոբիլիզացնել և կիսվել փորձով, նոու-հաուով, տեխնոլոգիաներով և ֆինանսական ռեսուրսներով, որոնք լրացնում և ամրապնդում են մեր տեղական ջանքերը, ընդլայնում կարողությունների զարգացումը, խթանում են նորարարությունները և ներդրումները,
  - Դառնալ էներգետիկ անցման ակտիվ մասնակիցներ և աջակցել մեզ՝ ներգրավվելով համայնքային գործողություններում:

ՄԵՆՔ՝ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐՍ, ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆՔ, ՈՐ.

- **Քաղաքական հաստատում.** Հանձնառությունը, Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագիրը և այլ համապատասխան ծրագրային (ռազմավարական) փաստաթղթերը պետք է վավերացվեն համայնքի ավագանու որոշմամբ: Սա թույլ է տալիս ապահովել երկարաժամկետ քաղաքական աջակցություն:
- **Տվյալների հավաքագրման և հաշվետվությունների կայուն, հետևողական, թափանցիկ և ներդաշնակեցված համակարգ.** Հիմնվելով քաղաքապետարանների և համայնքապետարանների, մարզերի և քաղաքային (համայնքային) ցանցերի փորձի վրա՝ Քաղաքապետերի դաշնագրի մեթոդաբանությունը հիմված է Եվրոպական հանձնաժողովի հետ համատեղ մշակված ամուր տեխնիկական և գիտական հիմքի վրա: Մշակվել են միասնական մեթոդաբանական սկզբունքներ և հաշվետվության ձևանմուշներ, որոնք Դաշնագիրը ստորագրողներին հնարավորություն են տալիս համակարգված կերպով գնահատել, զեկուցել և հրապարակայնորեն բացահայտել իրենց առաջընթացը: Ներկայացված Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագիրը հրապարակայնորեն հասանելի է ստորագրողների առցանց պրոֆիլում՝ Քաղաքապետերի դաշնագրի կայքում: Սա ապահովում է նրանց տեղական կլիմայական գործողությունների թափանցիկությունը, հաշվետվողականությունը և համադրելիությունը:
- **Ձեռնարկված ջանքերի ճանաչում և բարձր տեսանելիություն.** Հաշվետվությունների ձևանմուշների միջոցով հավաքագրված անհատական և կոլեկտիվ արդյունքները հանրությանը հասանելի են դառնում, մասնավորապես, Քաղաքապետերի դաշնագրի կայքում, որպեսզի ոգեշնչեն և հեշտացնեն փոխանակումները և ինքնագնահատումը: Քաղաքապետերի դաշնագրի միջոցով տվյալների ներկայացումը թույլ է տալիս ստորագրողներին ցուցադրել իրենց գործողությունների լայն ազդեցությունը տեղում: Քաղաքապետերի դաշնագրի հաշվետվական շրջանակի միջոցով հավաքված

[2] Օրինակ՝ մասնավոր հատվածը, ֆինանսական հաստատությունները, քաղաքացիական հասարակությունը, գիտական համայնքը և ակադեմիական կառույցները:

տվյալները նաև տեղական, եվրոպական և միջազգային քաղաքականություն մշակողներին էական տեղեկատվություն են տալիս տեղական գործողությունների վերաբերյալ:

- **Ստորագրողների կողմից ներկայացված տվյալների գնահատում.** Որակի այս վերահսկողությունը նպաստում է Քաղաքապետերի դաշնագրի ամբողջ նախաձեռնության վստահելիության և հուսալիության երաշխավորմանը:
- **Կասեցում անհամապատասխանության դեպքում.** Ստորագրողներն ընդունում են իրենց կասեցումը նախաձեռնությունից՝ Քաղաքապետերի դաշնագրի գրասենյակի կողմից նախապես գրավոր ծանուցման դեպքում, վերը նշված փաստաթղթերը (այսինքն՝ Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագիրը և մոնիտորինգի հաշվետվությունները) սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում: Այս ընթացակարգը ապահովում է թափանցիկություն, կայունություն և արդարություն այլ ստորագրողների նկատմամբ, որոնք կատարում են իրենց պարտավորությունները: